ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/2613/05/17
Նախագահող դատավոր՝ Ա. Թովմասյան
Դատավորներ՝ Ք. Մկոյան
Ա. Առաքելյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/2613/05/17**
2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

2024 թվականի մայիսի 21-ին

գրավոր ընթացակարգով քննելով Սուսաննա Ղևոնդյանի և Սուրեն Գևորգյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.05.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Սուսաննա Ղևոնդյանի և Սուրեն Գևորգյանի ընդդեմ ՀՀ կադաստրի կոմիտեի, երրորդ անձ՝ Արզուքան Ղևոնդյան՝ 02.03.1999 թվականին Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ կատարված իրավունքի գրանցումը մասնակի՝ Սուսաննա Ղևոնդյանին և Սուրեն Գևորգյանին չներառելու մասով, անվավեր ճանաչելու և 28.11.2002 թվականին կատարված վերագրանցումը վերացնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Սուսաննա Ղևոնդյանը և Սուրեն Գևորգյանը պահանջել են մասնակիորեն՝ իրենց չներառելու մասով, անվավեր ճանաչել 02.03.1999 թվականին

Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ կատարված իրավունքի գրանցումը և վերացնել 28.11.2002 թվականին կատարված վերագրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Ծատուրյան) (այսուհետ՝ Դատարան) 23.03.2021 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 30.05.2022 թվականի որոշմամբ Սուսաննա Ղևոնդյանի և Սուրեն Գևորգյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.03.2021 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք են ներկայացրել Սուսաննա Ղևոնդյանը և Սուրեն Գևորգյանը (ներկայացուցիչ՝ Վահագն Բաղրամյան):

<u>2.Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը</u>.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը, չի կիրառել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշումը, որը պետք է կիրառեր, սխալ է մեկնաբանել «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով.

Գործում առկա ապացույցների պարագայում, որոնցով ուղղակիորեն հաստատվում են, որ բողոք բերողները հանդիսացել են Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամներ և համատեղ վարել են տնտեսություն, Վերաքննիչ դատարանն անհիմն կերպով եզրակացրել է այդ ապացույցների բացակայության մասին և այդ հիմքով մերժել է բողոքը՝ զրկելով բողոք բերողներին սեփականության իրավունքից և խախտելով նրանց արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Բողոք բերողները հանդիսացել են Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամներ, քանի որ մշտապես բնակվել են Լյուբա Ղևոնդյանի հետ: Բողոք բերողների՝ Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամներ հանդիսանալու փաստն արդեն իսկ արձանագրված է օրդերով, որպիսի պարագայում ակնհայտ է, որ նրանք վարել են համատեղ տնտեսություն, ինչպիսի փաստն այլևս որևէ պարագայում չէր կարող քննարկման առարկա դառնալ: Ակնհայտ է, որ եթե բողոք բերողները չհանդիսանային Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամներ, մշտապես չբնակվեին վերջինիս հետ, չվարեին համատեղ տնտեսություն, ապա օրդերում չէին նշվի որպես Լյուբա Ղևոնդյանի ընտանիք, ինչպես նաև Լյուբա Ղևոնդյանին չէր հատկացվի երեք անձի համար նախատեսված բնակարան, փոխարենը կհատկացվեր ավելի փոքր մակերեսով բնակարան՝ մեկ անձի համար:

Տվյալ դեպքում անշարժ գույքի վարձակալ չհանդիսացող Լյուբա Ղևոնդյանը ձեռք է բերել սեփականության իրավունք, համաձայն Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման, իսկ Լյուբա Ղևոնդյանի կողմից վճարված փայատիրական գումարը՝ 13.500 ռուբլու չափով, որևէ պարագայում չի նշանակում, որ Լյուբա Ղևոնդյանը,

այդ գումարը վճարելով, անմիջականորեն ձեռք է բերել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: Այդ գումարը հանդիսացել է ոչ թե անշարժ գույքի առուվաճառքի արժեքը, այլ անշարժ գույքը Լյուբա Ղևոնդյանին և նրա ընտանիքի անդամներին օգտագործման համար հատկացնելու վճար:

Վերաքննիչ դատարանը, խախտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի պահանջները, չի ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, ինչի արդյունքում թույլատրելի և վերաբերելի ապացույցների՝ գործում առկա լինելու պարագայում անհիմն կերպով եզրակացրել է այդ ապացույցների բացակայության մասին և անհիմն կերպով մերժել է բողոք բերողների օրինական և իրավաչափ բողոքը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձինք պահանջել են բեկանել Վերաքննիչ դատարանի 30.05.2022 թվականի որոշումը՝ բեկանված մասով գործն ուղարկելով համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը կամ փոփոխել այն՝ հայցն ամբողջությամբ բավարարել:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Ժողովրդական դեպուտատների Երևանի Սովետական շրջսովետի գործադիր կոմիտեի 01.10.1986 թվականի թիվ 3747 միասնական օրդերի համաձայն՝ Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 տան 2-րդ մուտքի 1-ին հարկի թիվ 28 բնակարանը՝ երեք սենյակով, 46,4քմ բնակելի մակերեսով, տրվել է զբաղեցնելու քաղաքացի Լյուբա Երվանդի Ղևոնդյանին իր երեք հոգուց բաղկացած ընտանիքով: Նույն օրդերում, որպես բնակելի տարածության իրավունք ունեցողներ նշվել են ինքը՝ Լյուբա Երվանդի Ղևոնդյանը, քույրը՝ Սուսաննա Երվանդի Ղևոնդյանը, քրոջ տղան՝ Սուրեն Գագիկի Գևորգյանը **(հատոր 1-ին, գ.թ. 46-47)**:

2) Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման 1-ին կետի համաձայն՝ Երքաղխորհրդի գործկոմի շենքերի, շինությունների անձնագրավորման և գույքագրման վարձակալական վարչությանը հանձնարարվել է, կոոպերատիվի անդամ քաղաքացիների դիմումների հիման վրա, որպես անձնական սեփականություն գույքագրել բնակարանային, բնակշինարարական ավտոտնակների և այլ կոոպերատիվներում նրանց պատկանելիք մասը, եթե կոոպերատիվի անդամը լրիվ մուծել է իր փայը՝ բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի և իր օգտագործմանը տրված այլ շինության կամ տեղի համար **(հատոր 1-ին, գ.թ. 48-49)**:

3) Լյուբա Երվանդի Ղևոնդյանի անվամբ տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 052827 վկայականի համաձայն՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ.Անհաղթի փող., թիվ 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա գրանցվել է Լյուբա Երվանդի Ղևոնդյանի սեփականության իրավունքը: Ըստ նույն վկայականում

առկա գրառումների՝ վկայականի տրման ամսաթիվը նշվել է «02 մարտի 1999թ.», որի վրա գիծ է քաշվել և ամսաթիվը նշվել է «28 նոյեմբերի 2002թ.» **(հատոր 1-ին, գ.թ. 50-53)**:

4) Բնակշինկոոպի նախագահի 10.02.1999 թվականի տեղեկանքի համաձայն՝ այն տրվել է Դ.Անհաղթի փող., թիվ 19/1 շենքի թիվ 28 կոոպերատիվ բնակարանի փայատեր Լյուբա Երվանդի Ղևոնդյանին, որ իր բնակարանի փայատիրական գումարը, որը կազմում է 13.500 ռուբլի, ամբողջությամբ մուծված է ու պահանջ չունի: Նշված տեղեկանքը տրվել է ներկայացնելու գույքագրման վարչություն **(հատոր 2-րդ, գ.թ. 25)**:

5) ՀՀ կադաստրի կոմիտեի 29.11.2016 թվականի թիվ ԱՏ-25/11/2016-2-0241 տեղեկանքի համաձայն՝ ք.Երևան, Դավիթ Անհաղթի փողոց 19/1 շենք, 28 բնակարան հասցեով անշարժ գույքը Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա սեփականության իրավունքով գրանցվել է Լյուբա Երվանդի Ղևոնդյանի անվամբ: Միաժամանակ, Սուսաննա Երվանդի Ղևոնդյանի, Սուրեն Գագիկի Գևորգյանի անվամբ Դավիթ Անհաղթի փողոց 19/1 շենք, 28 բնակարան հասցեով անշարժ գույք գրանցված չէ **(հատոր 1-ին, գ.թ. 42)**:

6) ՀՀ կադաստրի կոմիտեի 23.02.2017 թվականի թիվ ԱՏ-21/02/2017-2-0003 տեղեկանքի համաձայն՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի փողոց 19/1 շենք, 28 բնակարան հասցեով անշարժ գույքը 22.11.2002 թվականին իրավունքների պետական գրանցում է ստացել Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա: Վերոհիշյալ որոշմամբ սեփականաշնորհվել են Երևան քաղաքի բոլոր կոոպերատիվ բնակարանները դրանց փայատերերի անվամբ և, քանի որ վերոհիշյալ բնակարանի փայատեր է հանդիսացել Լյուբա Ղևոնդյանը, իսկ օրդերում նշված մյուս անձինք օգտագործողներ են և ոչ կոոպերատիվի փայատերեր, ուստի բնակարանը սեփականաշնորհվել է Լյուբա Ղևոնդյանի անվամբ և իրավունքի պետական գրանցում ստացել վերջինիս անվամբ **(հատոր 1-ին, գ.թ. 43)**:

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, ինչը, սակայն, հերքվում է ստորև ներկայացվող պատճառաբանությամբ.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրմանը. արդյո՞ք բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամի կողմից փայավճարն ամբողջությամբ վճարելու դեպքում վերջինիս հետ միասին տվյալ բնակարանի

նկատմամբ համատեղ սեփականության իրավունք են ձեռք բերում նաև կոոպերատիվի անդամի հետ բնակվող ընտանիքի անդամները:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող՝ 01.07.1983 թվականին ուժի մեջ մտած, 26.11.2005 թվականին ուժը կորցրած ՀՀ բնակարանային օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 4-րդ հոդվածը սահմանում էր բնակարանային ֆոնդի կազմը: Այն է՝ բնակարանային ֆոնդն ընդգրկում էր.

- պետությանը պատկանող բնակելի տները և այլ շինությունների բնակելի տարածությունները (պետական բնակարանային ֆոնդ),
- կոլտնտեսություններին և մյուս կոոպերատիվ կազմակերպություններին, նրանց միավորումներին, արհմիութենական և մյուս հասարակական կազմակերպություններին պատկանող բնակելի տները և այլ շինությունների բնակելի տարածությունները (հանրային բնակարանային ֆոնդ),
- բնակարանային-շինարարական կոոպերատիվներին պատկանող բնակելի տները (բնակարանային-շինարարական կոոպերատիվների ֆոնդ),
- քաղաքացիների անձնական սեփականություն հանդիսացող բնակելի տները և բնակարանները (անհատական բնակարանային ֆոնդ):

Օրենսգրքի «Բնակելի տարածությունների հատկացումը պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում» վերտառությամբ 1-ին գլուխը, ամրագրելով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիների՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տներում օգտագործման համար բնակելի տարածություն ստանալու իրավունքը (27-րդ հոդված), սահմանում էր բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քաղաքացիներին պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություն հատկացնելու կարգը: Նշված գլխում ներառված՝ «Բնակելի տարածության օրդերը» վերտառությամբ 49-րդ հոդվածի առաջին պարբերության համաձայն՝ պետական կամ հանրային բնակարանային ֆոնդի տանը բնակելի տարածություն հատկացնելու վերաբերյալ որոշման հիման վրա պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային, ավանային, գյուղական խորհրդի գործադիր կոմիտեն քաղաքացուն տալիս է օրդեր, որը հատկացված բնակելի տարածությունն զբաղեցնելու միակ հիմքն է:

Օրենսգրքի «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվելը» վերտառությամբ 2-րդ գլուխը սահմանում էր պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվելու կարգը՝ սահմանելով, որ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվում են բնակելի տարածության վարձակալության պայմանագրին համապատասխան, որը կնքվում է բնակելի տարածության օրդերի հիման վրա, վարձատուի՝ բնակարանային-շահագործման կազմակերպության և վարձակալի՝ քաղաքացու միջև, որի անունով տրված էր օրդերը (Օրենսգրքի 51-րդ հոդված): Վարձակալի ընտանիքի այն անդամները, որոնք բնակվում էին նրա հետ համատեղ, վարձակալի հետ համահավասար օգտվում էին բնակելի տարածության վարձակալության

պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները, իսկ ընտանիքի չափահաս անդամները վարձակալի հետ նաև կրում էին համապարտ գույքային պատասխանատվություն հիշյալ պայմանագրից բխող պարտավորություններով (Օրենսգրքի 53-րդ հոդված): Ըստ Օրենսգրքի 54-րդ հոդվածի՝ վարձակալի ընտանիքի անդամ էր վարձակալի ամուսինը, նրանց երեխաներն ու ծնողները, իսկ այլ անձինք կարող էին վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե բնակվում էին վարձակալի հետ համատեղ և նրա հետ վարում ընդհանուր տնտեսություն: Օրենսգրքի 82-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալի ընտանիքի չափահաս անդամը կարող էր վարձակալի և նրա հետ բնակվող ընտանիքի մյուս անդամների համաձայնությամբ պահանջել նախկինում կնքված բնակելի տարածության վարձակալության պայմանագրով իրեն վարձակալ ճանաչել սկզբնական վարձակալի փոխարեն: Հանրային և պետական ֆոնդի տներում բնակելի տարածության հետ կապված ցանկացած գործարք վարձակալը կատարում էր իր հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների համաձայնությամբ:

Օրենսգրքի «Բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելը և դրանցից օգտվելը» վերտառությամբ 5-րդ գլուխը (106-114-րդ հոդվածներ), ամրագրելով բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց բնակարանային-շինարարական կոոպերատիվների մեջ մտնելու և այնտեղից բնակարան ստանալու իրավունքը (Օրենսգրքի 106-րդ հոդված), ի թիվս այլնի, սահմանում էր բնակարանային-շինարարական կոոպերատիվի մեջ ընդունվել ցանկացող քաղաքացիների հաշվառման կարգը, բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամ դառնալու պայմանները, բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամին բնակելի տարածություն հատկացնելու կարգը:

Նշված գլխում ներառված 112-րդ հոդվածը սահմանում էր. «Բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամ ընդունված անձին, կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ, որը հաստատում է պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեն, հատկացվում է մեկ կամ մի քանի սենյակից բաղկացած առանձին բնակարան՝ ընտանիքի անդամների թվին, նրա փայավճարի գումարին և բնակարանային-շինարարական կոոպերատիվի օրինակելի կանոնագրքով նախատեսվող բնակելի մակերեսի առավելագույն չափին համապատասխան:

Բնակարանային-շինարարական կոոպերատիվի տանը բնակարանների բնակեցումը կատարվում է պատգամավորների շրջանային, քաղաքային, քաղաքի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրվող օրդերներով (...)»:

Օրենսգրքի 5-րդ գլխում ներառված 114-րդ հոդվածը սահմանում էր. «Բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամների իրավունքներն ու պարտականությունները, բնակելի տարածություններից օգտվելու պայմանները և դրանց օգտագործումը դադարեցնելու հիմքերը որոշվում են կոոպերատիվի կանոնագրքով: Բնակելի տարածությունը վարձով տալու և նրանում ժամանակավոր բնակիչներ բնակեցնելու կարգը, ժամանակավոր բացակայող

կոոպերատիվի անդամի և նրա ընտանիքի անդամների համար բնակարանի նկատմամբ իրավունքի պահպանման պայմանները, փայակուտակումը բաժանելու դեպքում բնակելի տարածության օգտագործման կարգը և բնակարանային-շինարարական կոոպերատիվի տան բնակելի տարածությունների օգտագործման մյուս պայմանները պետք է նախատեսվեն բնակարանային-շինարարական կոոպերատիվի կանոնագրքով»:

Վերը նշված իրավակարգավորումներից հետևում է, որ բնակարանային ֆոնդն ուներ չորս հիմնական բաղադրիչ՝ պետական բնակարանային ֆոնդը, հանրային բնակարանային ֆոնդը, բնակարանային-շինարարական կոոպերատիվների ֆոնդը և անհատական բնակարանային ֆոնդը: ՀՀ բնակարանային օրենսգիրքը տարբերակում էր մի կողմից՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածությունների հատկացման, այդ տներում բնակելի տարածությունից օգտվելու, մյուս կողմից՝ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելու, այդ տներում բնակելի տարածությունից օգտվելու կանոնները՝ պայմանավորված այդ ֆոնդերի առանձնահատկություններով: Մասնավորապես, պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածությունների հատկացմանը, այդ տներում բնակելի տարածությունից օգտվելուն վերաբերող նորմերը սահմանված էին ՀՀ բնակարանային օրենսգրքի 1-ին և 2-րդ գլուխներով, իսկ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելու և դրանցից օգտվելու կանոնները սահմանված էին Օրենսգրքի 5-րդ գլխով: Վերոգրյալից հետևում է, որ Օրենսգրքի՝ պետական և հանրային բնակարանային ֆոնդին վերաբերող նորմերը կիրառելի չէին բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելու և այդ տներում բնակելի տարածությունից օգտվելու հետ կապված իրավահարաբերությունների նկատմամբ: Այլ կերպ՝ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելու և այդ տներում բնակելի տարածությունից օգտվելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում էին բացառապես Օրենսգրքի «Բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին բնակելի տարածություններով ապահովելը և դրանցից օգտվելը» վերտառությամբ 5-րդ գլխի նորմերով:

Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածությունից օգտվելու կարգը սահմանող՝ Օրենսգրքի 2-րդ գլուխի և բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում բնակելի տարածությունից օգտվելու կարգը սահմանող 5-րդ գլխի նորմերի համեմատական վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է դրանց հետևյալ էական տարբերությունները. պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության վարձակալի ընտանիքի համատեղ բնակվող անդամները վարձակալի հետ համահավասար օգտվում էին բնակելի տարածության վարձակալության պայմանագրից բխող բոլոր իրավունքներից և կրում բոլոր պարտականությունները: Բնակելի տարածության հետ կապված ցանկացած գործարք (բնակելի տարածության փոխանակում, վարձակալության պայմանագրի

փոփոխում, լուծում, բնակելի տարածությունում այլ անձանց բնակեցում) վարձակալն իրավասու էր կատարել միայն իր հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների համաձայնությամբ: Ավելին, սկզբնական վարձակալի փոխարեն վարձակալ կարող էր դառնալ սկզբնական վարձակալի հետ բնակվող ընտանիքի մեկ այլ անդամ՝ ընտանիքի մյուս անդամների համաձայնությամբ:

Մինչդեռ, Օրենսգիրքը բնակարանային-շինարարական կոոպերատիվի անդամի և վերջինիս հետ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում բնակվող ընտանիքի անդամների իրավունքների ու պարտականությունների համահավասարության սկզբունք չէր նախատեսում. կոոպերատիվի անդամի և նրա ընտանիքի անդամների իրավունքներն ու պարտականությունները, բնակելի տարածություններից օգտվելու պայմանները և դրանց օգտագործումը դադարեցնելու հիմքերը որոշվում էին կոոպերատիվի կանոնագրքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքով պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության վարձակալի և նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների իրավունքների ու պարտականությունների համահավասարության սկզբունքն իր արտացոլումը հետագայում գտավ «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքում (ուժի մեջ է մտել 01.09.1993 թվականին, ուժը կորցրել է 04.01.2007 թվականին), որով սահմանվում էին Հայաստանի Հանրապետության տարածքում պետական և հանրային բնակարանային ֆոնդի, համայնքային բնակարանային ֆոնդի (բնակելի տների և այլ շինությունների բնակելի տարածությունների) սեփականաշնորհման հիմնական դրույթները, կարգավորվում էին սեփականության հարաբերությունների ձևափոխման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները, ինչպես նաև ապահովվում էր բնակարանային ֆոնդի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը: Նշված օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական, հանրային և համայնքային բնակարանային ֆոնդի տների բնակարանների սեփականաշնորհումը՝ կամավորության սկզբունքով քաղաքացիներին բնակարանների (բնակելի տարածությունների) անհատույց հատկացումն է: Նույն օրենքի 4-րդ հոդվածի «ա» կետի համաձայն՝ սեփականաշնորհման օբյեկտ էին հանդիսանում պետական, հանրային, ինչպես նաև համայնքային ֆոնդի բնակարանները (բնակարանային ֆոնդ):

ՀՀ բնակարանային օրենսգրքում ամրագրված պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածության նկատմամբ վարձակալի և նրա հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամների ունեցած իրավունքների համահավասարության սկզբունքն իր դրսևորումը գտավ, մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում, ըստ որի՝ բնակարանային ֆոնդի բնակարանների սեփականաշնորհումն ընտանիքի չափահաս անդամների համաձայնության դեպքում ձևակերպվում է կամ տվյալ բնակարանի վարձակալի անունով, կամ նրա ընտանիքի որևէ չափահաս անդամի անունով՝ որպես ընտանիքի

բոլոր անդամների ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնեմասային սեփականություն:

«Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկայից, «սեփականաշնորհում» եզրույթի սահմանումից, սեփականաշնորհման օբյեկտների շրջանակից և օրենքի ողջ բովանդակությունից բխում է, որ նշված օրենքը կիրառելի չէր բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում քաղաքացիներին հատկացված բնակելի տարածությունների նկատմամբ: Ըստ այդմ՝ բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում կոոպերատիվի անդամի ընտանիքի անդամները չէին կարող հավակնել ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության՝ նշված օրենքի կարգավորումների վկայակոչմամբ:

Բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում սեփականության իրավունքի ձեռք բերման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով սույն գործով կիրառելի են 01.01.1999 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իրավակարգավորումները) 117-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է կոոպերատիվի հասկացությունը, ըստ որի՝ այն քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորում է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կոոպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան, բաժանվում է նրա անդամների փայերի:

Նույն օրենսգրքի 172-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ բնակարանային, ամառանոցային, ավտոտնակային կամ այլ կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող այլ անձինք, որոնք լրիվ մուծել են իրենց փայավճարը կոոպերատիվի կողմից իրենց տրամադրված բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի կամ այլ շինության համար այդ գույքի նկատմամբ ձեռք են բերում սեփականության իրավունք:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներից մեկում արձանագրել է, որ կոոպերատիվ սեփականությունն ի սկզբանե առաջանում է կոոպերատիվ կազմակերպություն ստեղծելու նպատակ ունեցող սուբյեկտների գույքի որոշակի մասի միավորման հիման վրա: Կոոպերատիվի անդամ դառնալու ցանկություն ունեցող յուրաքանչյուր քաղաքացի հրաժարվում է իր ունեցվածքի որոշակի մասի սեփականության իրավունքից, այն հանձնում է կազմակերպությանը որպես փայավճար՝ նրա անդամը դառնալու, գործունեությանը մասնակցելու կամ գործունեության արդյունքներից օգտվելու համար: Այլ կերպ ասած՝ կոոպերատիվի գործունեության նյութական հիմքը նրա սեփականություն կազմող գույքն է, որը կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան բաժանվում է փայերի:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է նաև, որ յուրաքանչյուր կոոպերատիվ հանդիսանում է այն գույքի սեփականատերը, որը նրան է հանձնվում անդամների կողմից որպես փայավճար և այն գույքի սեփականատերը, որն արտադրում կամ ձեռք է բերում իր գործունեությամբ: Ընդ որում, յուրաքանչյուր կոոպերատիվ ինքնուրույն սեփականատեր է, և ոչ ոք իրավասու չէ նրան զրկել սեփական գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու իրավունքից կամ սահմանափակել այդ իրավունքը:

Բնակարանային-շինարարական ընկերության՝ որպես սեփականության իրավունքի ինքնուրույն սուբյեկտի սեփականությունն է հանդիսանում այն օբյեկտը, որը կառուցվում է կոոպերատիվի մեջ միավորված անդամների փայավճարների հաշվին, ինչպես նաև այն դրամական գումարները, որոնք ներդրվում են ընդհանուր օգտագործման գույքի պահպանության անհրաժեշտ ծախսերը կատարելու համար: Կոոպերատիվի այն անդամները, ովքեր լրիվ մուծել են փայը բնակարանի կամ իրենց օգտագործման տրված այլ շինության կամ տեղի համար, ձեռք են բերում այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք *(տե՛ս, Ֆելիքս Քոչարյանն ընդդեմ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի թիվ ՎԴ/12482/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 01.02.2023 թվականի որոշումը):*

ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ փայավճարը լրիվ մուծելուց հետո կոոպերատիվի կողմից տրամադրված բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի կամ այլ շինության նկատմամբ սեփականության իրավունք են ձեռք բերում միայն կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող այլ անձինք:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Կոոպերատիվի անդամն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, ով անդամակցում է այնպիսի կամավոր ստեղծված միավորմանը, որի նպատակն իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով նրանց նյութական և այլ կարիքների բավարարումն է, իսկ փայակուտակման իրավունք ունեցող այլ անձը կոոպերատիվի անդամ չէ, սակայն այն գույքի համասեփականատերն է, որից կոոպերատիվի անդամը կատարել է փայավճարի վճարումը (այսինքն՝ այն անձը, ով կոոպերատիվի անդամի հետ գտնվել է գույքային հարաբերության մեջ) *(տե՛ս, Հրաչյա Մելքոնյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գյումրու տարածքային սպորաբաժանման, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության թիվ ՎԴ5/0186/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2009 թվականի որոշումը):*

Ամբողջ վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բնակարանային-շինարարական կոոպերատիվի տներում բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու պայմանը փայավճարն ամբողջությամբ վճարելու փաստն է: Ընդ որում, փայավճարն ամբողջությամբ վճարելու դեպքում կոոպերատիվի կողմից հատկացված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք են բերում միայն կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող անձը (անձինք): Այսինքն՝ կոոպերատիվի անդամի սեփականության իրավունքի հետ միասին ծագում է նաև փայակուտակման իրավունք ունեցող անձի սեփականության

իրավունքը: Կոոպերատիվի անդամի հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամ լինելու հանգամանքն ինքնին վերջինիս իրավունք չի տալիս փայավճարն ամբողջությամբ վճարած կոոպերատիվի անդամի և (կամ) փայակուտակման իրավունք ունեցող անձի հետ միասին տվյալ բնակելի տարածության նկատմամբ ձեռք բերել ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունք: Կոոպերատիվի անդամի հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամը կոոպերատիվի անդամի հետ միասին ձեռք է բերում սեփականության իրավունք միայն այն դեպքում, երբ հանդիսանում է փայակուտակման իրավունք ունեցող անձ: Այլ կերպ՝ փայակուտակման իրավունք չունեցող՝ կոոպերատիվի անդամի հետ համատեղ բնակվող ընտանիքի անդամը կոոպերատիվի անդամի կողմից փայավճարը վճարելու դեպքում տվյալ բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք չի բերում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորները, դիմելով դատարան, խնդրել են մասնակի՝ իրենց չներառելու մասով, անվավեր ճանաչել 02.03.1999 թվականին Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ կատարված իրավունքի գրանցումը և վերացնել 28.11.2002 թվականին կատարված վերագրանցումը:

Դատարանը, 23.03.2021 թվականի վճռով մերժելով հայցը, պատճառաբանել է, որ սույն գործով հայցվորները, իրավահարաբերության պահին գործող ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածի դրույթի ուժով, չեն հանդիսանում Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամ, հետևաբար 02.03.1999 թվականին Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ իրավաչափորեն գրանցվել է միայն Լյուբա Ղևոնդյանի սեփականության իրավունքը:

Միաժամանակ Դատարանը նշել է, որ գործում առկա չէ ապացույց՝ սույն գործով հայցվոր Սուսաննա Ղևոնդյանի՝ Լյուբա Ղևոնդյանի հետ վերոնշյալ ժամանակահատվածում ընդհանուր տնտեսություն վարած լինելու վերաբերյալ, իսկ հայցադիմումին կից ներկայացված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 23.12.2016 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սուսաննա Երվանդի Ղևոնդյանը Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարան հասցեում հաշվառվել է 24.02.1987 թվականից, իսկ Սուրեն Գագիկի Գևորգյանը՝ 08.07.2003 թվականից:

Դատարանը սույն դեպքում կիրառելի չի համարել 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած և 04.01.2007 թվականին ուժը կորցրած՝ «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի նորմերը:

Վերաքննիչ դատարանը, 30.05.2022 թվականի որոշմամբ մերժելով հայցվորների վերաքննիչ բողոքը, նշել է, որ *«սույն գործով հայցվորներ Սուսաննա Ղևոնդյանը և Սուրեն Գևորգյանը իրավահարաբերության պահին գործող ՀԽՍՀ բնակարանային օրենսգրքի իմաստով, չեն հանդիսանում Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամներ, քանի որ նույն*

օրենսգրքի 54-րդ հոդվածի համաձայն՝ վարձակալի ընտանիքի անդամների թվին են պատկանում վարձակալի ամուսինը, նրանց երեխաները և ծնողները, մինչդեռ Սուսաննա Ղևոնդյանը ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դ.Անհաղթի փող., թիվ 19/1 շենքի թիվ 28 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերած անձի՝ Լյուբա Ղևոնդյանի քույրն է, իսկ Սուրեն Գևորգյանը՝ քրոջ որդին, որպիսի անձինք կարող են վարձակալի ընտանիքի անդամներ ճանաչվել, եթե հաստատվում է, որ նրանք բնակվում են վարձակալի հետ համատեղ և նրա հետ վարում են ընդհանուր տնտեսություն: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ ապացույց՝ սույն գործով հայցվոր Սուսաննա Ղևոնդյանի՝ Լյուբա Ղևոնդյանի հետ վերոնշյալ ժամանակահատվածում ընդհանուր տնտեսություն վարած լինելու վերաբերյալ: Հայցադիմումին կից ներկայացված բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 23.12.2016 թվականի տեղեկանքի համաձայն՝ Սուսաննա Երվանդի Ղևոնդյանը Երևան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարան հասցեում հաշվառվել է 24.02.1987 թվականից, իսկ Սուրեն Գագիկի Գևորգյանը՝ 08.07.2003 թվականից»:

Վերաքննիչ դատարանը փաստել է նաև, որ *«սույն դեպքում Դավիթ Անհաղթ փողոցի 19/1 շենքի թիվ 28 բնակարանը ձեռք է բերվել «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով. բնակարանային կոոպերատիվի անդամը՝ Լյուբա Երվանդի Ղևոնդյանը ամբողջությամբ վճարել է քննարկվող բնակարանի փայատիրական գումարը՝ 13.500 ռուբլու չափով, արդյունքում դրա նկատմամբ Երքաղխորհրդի գործկոմի 04.09.1991 թվականի թիվ 16/3 որոշման հիման վրա, գրանցվել է Լյուբա Երվանդի Ղևոնդյանի սեփականության իրավունքը: Այսինքն, «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի դրույթները և այդ կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները սույն գործի հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն, քանի որ սեփականաշնորհման կամ որ նույնն է՝ քաղաքացիներին բնակարանների անհատույց հատկացման գործընթաց սույն դեպքում չի իրականացվել»:*

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն վարչական գործի փաստերին և Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Վճռաբեկ դատարանը նախևառաջ անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն սույն գործով կիրառելի չեն համարել 01.09.1993 թվականին ուժի մեջ մտած և 04.01.2007 թվականին ուժը կորցրած՝ «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքի նորմերը՝ հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ոչ թե տեղի է ունեցել պետական և հանրային բնակարանային ֆոնդի տան սեփականաշնորհման գործընթաց, այլ կոոպերատիվի անդամի կողմից փայավճարի գումարի ամբողջական վճարման արդյունքում բնակարանային-շինարարական կոոպերատիվի տան նկատմամբ գրանցվել է կոոպերատիվի անդամի սեփականության իրավունքը:

Միաժամանակ Դատարանի և Վերաքննիչ դատարանի դատական ակտերի պատճառաբանական մասերի ուսումնասիրության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ինչպես Դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը վեճը լուծել են ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածի կիրառմամբ՝ էական նշանակություն տալով հայցվորների՝ կոոպերատիվի անդամ Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամ հանդիսանալու (չհանդիսանալու) հանգամանքին:

Մինչդեռ, վերն արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի նկատմամբ ՀՀ բնակարանային օրենսգրքի 54-րդ հոդվածը կիրառելի չէ: Վերջինս ընդգրկված էր նույն օրենսգրքի՝ «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվելը» վերտառությամբ գլխում, որի իրավակարգավորումները կիրառելի չեն բնակարանային-շինարարական կոոպերատիվների տներում անձանց բնակելի տարածությունների նկատմամբ:

Հաշվի առնելով, որ սույն գործի նկատմամբ ՀՀ բնակարանային օրենսգրքի «Պետական և հանրային բնակարանային ֆոնդի տներում բնակելի տարածություններից օգտվելը» վերտառությամբ գլխի նորմերը, այդ թվում՝ 54-րդ հոդվածը կիրառելի չեն, ինչպես նաև հիմք ընդունելով վերն արտահայտված այն դիրքորոշումը, որ փայավճարն ամբողջությամբ վճարելու դեպքում կոոպերատիվի կողմից հատկացված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք են բերում միայն կոոպերատիվի անդամը և փայակուտակման իրավունք ունեցող անձը (անձինք)՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վեճի լուծման համար էական նշանակություն է ձեռք բերում ոչ թե հայցվորների՝ կոոպերատիվի անդամ Լյուբա Ղևոնդյանի ընտանիքի անդամ լինելու (չլինելու) փաստը, այլ հայցվորների՝ փայակուտակման իրավունք ունեցող անձինք հանդիսանալու (չհանդիսանալու) փաստը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործի փաստերից հետևում է, որ կոոպերատիվի անդամ է հանդիսացել Լյուբա Ղևոնդյանը, ով ամբողջությամբ վճարել է փայավճարը և այդ փաստի ուժով ձեռք բերել միանձնյա սեփականության իրավունք խնդրո առարկա բնակարանի նկատմամբ: Միաժամանակ գործում առկա ապացույցների հետազոտման արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց հայցվորների՝ փայակուտակման իրավունք ունեցող անձ հանդիսանալու փաստի վերաբերյալ: Մինչդեռ, փայավճարն ամբողջությամբ մուծելուց հետո կոոպերատիվի կողմից տրամադրված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք հայցվորները կարող էին ձեռք բերել միայն փայակուտակման իրավունք ունեցող անձինք լինելու պարագայում:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորները խնդրո առարկա բնակարանի նկատմամբ ձեռք չեն բերել սեփականության իրավունք, որպիսի պայմաններում Լյուբա Ղևոնդյանի միանձնյա սեփականության իրավունքի գրանցումն իրավաչափ է:

Ի ամփոփումն վերոշարադրյալի՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, մերժելով հայցվորների վերաքննիչ բողոքը և Դատարանի դատական ակտը թողնելով անփոփոխ, կայացրել է գործի ելքը ճիշտ լուծող դատական ակտ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը, սակայն դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վճռաբեկ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Ըստ այդմ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ստորադաս դատարանի դատական ակտը պատճառաբանելու իր լիազորությունը, որպիսի պատճառաբանությունները բերված են սույն դատական ակտում:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի (կիրառելի խմբագրությամբ) համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ, եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Սուսաննա Ղևոնդյանի և Սուրեն Գևորգյանի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարման էր ենթակա 20.000 ՀՀ դրամ՝ որպես մեկ ոչ դրամական պահանջի գործով վճռաբեկ բողոքի համար օրենքով սահմանված պետական տուրքի գումար: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով՝ ավելի վճարված պետական տուրքը ենթակա է վերադարձման հայցվորներ Սուսաննա Ղևոնդյանին և Սուրեն Գևորգյանին:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորներ Սուսաննա Ղևոնդյանի և Սուրեն Գևորգյանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջիններիս բողոքը ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պետական տուրքից բացի, այլ դատական ծախս կատարված լինելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել: ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 30.05.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ